ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՕՐԹՕԴՈՔՍ ԵԿԵՂԵՑԻ

Հոկտեմբերի 26-ին վառաւոր կերպով տօնուել է մայրաքաղաքի ամենահին տաճարներից մէկի՝ Պետրոս Մեծի Նեվա գետի ափերի մօտ կառուցած գործունէութեան վկայի՝ Ս. Երրորդութեան տաճարի երկու հարիւր ամեակը: Այդ տաճարի մէջ Պետրոս մեծը և երեցփոխ էր, և ժողովուրդ, և նուիրաբերող: Նա շատ անգամ է կարդացել այդտեղ առաքելոց թղթերը և խմբի մէջ իբրև բամբ երգել:

Աւագ քահանան ցանկութիւն է յայտնել, որ քաղաքի կառավարութիւնը պահպանէ և հատատաէ յաւիտեան Պետրոս մեծի պատմական յիշատակները արդէն շատ վաղուց ծրագրուած՝ այժմեան փայտեայ տաճարի տեղը մի նոր, ընդարձակ քարից եկեղեցի շինել:

Սիբոս կղզու բնակիչները ռատիկ յուզուեցին մի 15 տարեկան Սոֆիա անունով յոյն աղջկայ կաթոլիկ դարձնելու պատճառով: Նորան խորամանկութեամբ տարել են կաթոլիկական կանանց մի վանք իբրև ողորմած քոյր: Յատիշատկուած աղջկայ հայրը այդ միանձնհուլների վարմունքի դէմ ռատիկ գրգռուած, դանգատուեց տեղական իշխանութեան, հարկաւոր միջոցներ ձեռք առնել իւր աղջկան վերադարձնելու համար: Յատիշատկուած հելլէնուհու հօր դանգատի պատճառով Սիբոս կղզին ուղարկուել է քննիչ, սակայն նորան չեն թողել վանք մտնել, այն հիման վերայ, որ աղամարդկանց մուտքն արգելուած է: Բացի այդ, վանքը գտնւում է ֆրանսիական հովանաւորութեան տակ, այդ պատճառով էլ բոլորովին ազատ է տեղական իշխանութեան դատաստանին ենթարկուելուց: Այդ վանքը՝ որ կատարում է այդպիսի յատիշատկութիւններ և բռնի ուժով կաթոլիկացնում է ուղղափառ աղջկերանց, մի հատատատութիւն է՝ որ յատկապէս կազմակերպուած և յարմարեցրած է այդպիսի նպատակների համար: Նա շրջապատուած է քարէ հատա պարսպով, և դռները միշտ փակ են: Վանքը կարող է հարկաւոր դէպքերում ոչ հեռու գտնուած վանքի կուսակրօն հոգևորականներից օգնութիւն ստանալ, որով այդ կաթոլիկական վանքը թողնում է կատարեալ բերդի տպաւորութիւն:

Այնտեղ ապրում են 12 միանձնուհիք, որոնք նոյն տեղը գտնուած ուսումնարան յաճախող յոյն ուղղափառ աղջկանց համար ուսուցչի և դաստիարակչի դեր են կատարում։ Աշակերտուհիների թիւը 50 է։ Սոքա բոլորը ուղղափառ յոյների աղջիկներ են, որոնք ֆրանսիական կրօնական հաստատութիւններից ուսումնարանների տուած կրթութիւնը աւելի բարձր են դասում քան թէ սեպհական ազգային ուսումնարաններինը։ Կրթութիւնը տրւում է կաթոլիկական խիստ ոգով. աղջիկները անպայման պարտական են ներկայ լինել կաթոլիկ եկեղեցու ժամերգութեան, սեղանի և օրհնած ջրով լի անօթի առաջ ծունկ չոքել, կաթոլիկական եկեղեցական գրքեր կարդալ են։ Սովորողներից շատերը այնչափ թափանցւում են կաթոլիկութեամբ, որ կամաւոր կերպով իբրև միանձնուհի մնում են վանքի մէջ։ Այցելուհիներին ստիպում են կտրել ամեն տեսակ յարաբերութիւն հասարակութեան, բարեկամների, նոյն իսկ ծնողների հետ և կուրօրէն հնազանդուել մայրապետին. և նոցա տալիս են ամենասարսափելի խրատումներ, որը մի միայն մահը կարող է քանդել։ Վանքն ունի առանձին խորհրդաւոր և փառաւոր ծիսակատարութիւն միանձնուհիներ ընդունելու համար, որից յետոյ իր տուած խոստումների համեմատ դառնում է կոյր գործիք Հռոմի համար»։

Աֆոն վանքերի վարդապետները նուիրաբերել են 6000 տաճկական լիրա (մէկ լիրան մօտ 8 ռուբլի է), որպէսզի Կ. Պոլսում ռուսաց վաճառականական մի ուսումնարան կառուցւի։ Ամենամեծ գումարը տալիս են ռուսաց վանքերը, Ս. Պանտելէյմոնի Սերայեան անապատի, Ս. Եղիա մարգարէի, յունաց Վատօպետ և Իվերոնկիյ և բուլղարական Զոգրաֆեան վանքերը։ Բացի այդ, Կ. Պոլսում ռուս տաճկական առևտրական յարաբերութեանը աւելի զարկ տալու համար ըստ բուլղարական „Вѣсти“ լրագրի, այնտեղ կազմուել է մի յանձնաժողով, որի անդամներն են տեղական ռուս վաճառականները ռուսաց հիւպատոսի նախագահութեամբ։

Սեպտեմբերի 16-ին Գալիցիայի Կոլոմիա քաղաքում տեղի ունեցաւ Մ. Կաչկովսկու անուան նուիրուած Գալիցիայի հասարակութեան ժողովրդական լուսաւորութեան ընդհանուր ժողովը։ Նա ամենափառաւոր և բազմամարդն էր (աւելի քան 3000

մասնակցողներ ունէր)․ ռուս ժողովրդական գործին նուիրուած ժողովներից։ Եւ նոյն ընկերութեան ամբողջ տարուայ համար տուած հաշուետուութիւնը ցոյց տուեց թէ որքան արդիւնաւէտ և փրկարար է եղել Ռուսաստանի համար այն գործիչների աշխատանքը, որոնք իրենց անձը զրկելով, աշխատում են Գալիցիայում յօգուտ ռուս ժողովրդի․ նրանք իրենց դրօշակի վերայ գրել են «սովորիր՝ աշխատիր, աղօթիր և ժուժկալիր»։ Ներկայ տարուայ մէջ ընկերութիւնը եկամուտ է ունեցել 8,343 անդամից 19,464 կորօնա (կորօնա=39 կոպ․) և ծախսել 16,501 կոր․ Այն ընկերութիւնն ունի նաև 48,538 կորօնա, որով պիտի սեփական տուն շինի։ Ընկերութիւնը ներկայ տարուայ ընթացքում տուել է $30\frac{1}{2}$ տպագրական թերթ, կրօնական բովանդակութեամբ յօդուածներով և բացել է 88 նոր ժողովրդական գրադարաններ, որոնց նա 5000 օրինակ գիրք և 1000 կոր․ դրամ է նուիրել։ Որպէս զի աւելի ընդարձակ կերպով կարողանայ կրթութիւն տարածել գիւղական տարրի մէջ, ընկերութիւնը որոշել է բանալ պանսիոններ, որտեղ կը կրթուին գիւղացի երեխաներ։ Այդ պանսիոնների գլխաւոր պայմանը արժանաւորութիւնն է։ Ընկերութեան խորհրդի նախագահ ընտրուել է Գալիցիայի յայտնի—ռուս գործիչ Ֆ․ Ս․ Սվիստուն։

Ռուս եկեղեցու վաղուցուան ցանկութիւնը, ծխականներին համախմբել եկեղեցու շուրջը, սորա լուսաւորիչ և բարեգործ հաստատութիւններից բարեկարգութեան և կենդրոնացման համար, իրագործուել է և իրագործւում է եկամուտների միջոցով։ Նոյն իսկ թեմական լրագրների հատ ու կտոր տեղեկութեանց հիման վերայ կարելի է ասել, որ այժմ ոչ պակաս եկամուտներ կան, և ծխականների մի մասը իւր վերայ նայում է իբրև կենդանի անդամի և հասարակական գործչի եկեղեցւոյ մէջ, որի կրօնական կարիքը և կացութիւնը պիտի հետաքրքրէ թէ ընդհանուրին և թէ մասնաւոր անհատներին։ Բացւում են նորանոր եկեղեցական ծխական եղբայրութիւնների հոգաբարձութիւններ, որոնք իրենց գաղափարով և մասնաւոր գործունէութեամբ ծխականների ոյժերը յօգուտ ընդհանուրի միացնելու համար ամենալաւ կազմակերպութիւնն ունին։

Ռուս ժողովրդի եկեղեցական-կրօնական կեանքի ուսումնասիրութիւնը՝ նորա անցեալի, թեմական պատմութեան, հոգևոր ուսումնարանների և ուրիշ կրօնական լուսաւորիչ և կրթիչ

հատատուութիւնների մասին վերջի ժամանակներս սկսել է հետաքրքրուողներիս ելի մեծ շրջան գրաւել։ «Օրէնքուրգի գիւանական յանձնաժողովի աշխատութիւնների» մէջ լոյս տեսաւ պ. Ն. Զերնաեվսկու «Օրենքուրգի թեմը իւր անցեալում և ներկայում» հետազօտութիւնը։ Շատ թեմերում տեղի է ունենում տեղական դիւանների քննութիւն և ուսումնասիրութիւն։ Վլադիմիրի եպիսկոպոս Գերաս. Սերգիի աջակցութեամբ և զանազան անձնաւորութիւնների աշխատակցութեամբ, սեմինարիայի դասատու—Ն. Գալիցեվի ձեռներեցութեամբ ապագայ ոչնչացումից և գողացուելուց ազատել են և կարգի են բերել Վլադիմիրի կոնսիստորիայի ԺԸ. դարու դիւանը։

ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Պապը նուիրել է 50,000 ֆրանկ յոգուտ մակեդոնական աղքատացած քրիստոնեաների։ Նուիրուած գրամներից մի մասը յանձնուած է տիկին Բալամեսիևայի տնօրէնութեան, իսկ միւս մասը փոխադրուած է անմիջապէս Անդրիանոպոլ։

Տիկին Բալամեսիևան ուղեւորուում է Բարգաս, Մակեդոնիայից եկած փախստականների համար ճաշարաններ հիմնելու սաւառնական բարեգործական ընկերութեան միջոցներով։ Նոյն այդ գումարից 2,000 ֆրանկ տրուած է Դաբնեցում գտնուած փախստականների օգտին։

Պրոֆ. Նեպոլդ հետաքրքիր կերպով մերկացնում է գերմանական կաթոլիկ միսիոնարական գործերը Չինաստանում։ Սեպտեմբերի վերջերին Լիզնիցում ժողովուած բողոքական միսիոնարների ընկերութեան մէջ հրապարակաւ յայտնեց, որ այդ միսիոնարութեան գլուխ Անցեր եպիսկոպոսը «իւր բռնութեամբ, խաբեբայութեամբ, գինեմոլութեամբ և իւր փառասիրութեամբ էական մասնակցութիւն է ունեցել չինական պատերազմի յարուցման մէջ»։ Կաթոլիկական լրագրները, լինելով չը յապաղեցին պաշտպանել Անցերին և այդ բոլորը սուտ հրատարակել։ Բայց Նեպոլդը իւր խօսքի հաստատութեան համար խոստանում է ասածը փաստերով ապացուցանել։